



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Բլաուի հիվանդությունը/Յուվենիլ Սարկոիդոզը

Տարբերակ 2016

3. Առօրյա կյանքը:

3.1 Ինչպե՞ս է հիվանդությունը ազդում երեխայի և նրա ընտանիքի առօրյա կյանքի վրա:

Երեխան և նրա ընտանիքը կարող են ունենալ տարբեր խնդիրներ, մինչև հիվանդության ախտորոշվելը: Հենց որ ախտորոշումը դրվում է, երեխան կարիք կունենա բժշկի (մանկական ռեւմատոլոգ և ակնաբույժ) կանոնավոր այցերի՝ հիվանդության ակտիվության հսկողության և դեղորայքային բուժման կարգավորման համար: Հոդերի ծանր ախտահարմամբ երեխաները ֆիզիոթերապիայի կարիք ունեն:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Հիվանդության խրոնիկ ընթացքը կարող է խանգարել դպրոց հաճախմանը և ազդել առաջադիմության վրա: Հիվանդության լավ հսկողությունը կարևոր է դպրոց հաճախելու հնարավորության տալու համար: Ուսուցիչներին հիվանդության մասին տեղեկացնելը կարող է օգտակար լինել, մասնավորապես, թե ինչ անեն նրանք նշանների արտահայտման դեպքում:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Բլաուի համախտանիշով հիվանդներին անհրաժեշտ է խրախուսել, որպեսզի զբաղվեն սպորտով, սահմանափակումները կախված են հիվանդության ակտիվության հսկողությունից:

3.4 Ի՞նչ կատեք սննդակարգի մասին:

Չկա որևէ յուրահատուկ սննդակարգ: Սակայն, կորտիկոստերոիդ ստացող հիվանդները պետք է խուսափեն քաղցր և աղի սննդի չարաշահումից:

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ոչ:

3.6 Կարո՞ղ է երեխան պատվաստվել:

Երեխան կարող է պատվաստվել, բացառությամբ կենդանի պատվաստանյութերով պատվաստումների, կորտիկոստերոիդով, Մետոտրեքսատով կամ ՌԻԼԳ- α -ով բուժում ստանալու ժամանակ:

3.7 Ի՞նչ կատեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:

Բլաուի համախտանիշով հիվանդները չունեն ծնելիության խնդիրներ` կապված հիվանդության հետ: Եթե նրանք ստանում են Մետոտրեքսատ, անհրաժեշտ է հակաբեղմնավորիչների ճիշտ օգտագործում, քանի որ այս դեղը պտղի վար կարող է կողմնակի է ազդեցություններ ունենալ: Քանի որ չկան տվյալներ ՌԻԼԳ- α -ինհիբիտորների և հղիության անվտանգության մասին, հիվանդները պետք է դադարեցնեն նրանց ընդունումը մինչև հղիանալը: Որպես ընդհանուր օրենք, հղիությունը ավելի լավ է պլանավորել և բուժումը և հիվանդության հետագա վարումը հարմարեցնել նախապես: